

Յովհաննէս Եպիսկոպոս Խուլ, Երբեմն
Պատրիարք Կ.Պոլսոյ Հայոց, 1632էն ետեւ ի
Հռոմ ապրած է: Սիմէոն Սերաստացի Կաթողիկոսն
Սոյ (օծեալ 1633) իբր 1634—5ին առ Փի-
լիպպոս Կաթողիկոսն Էջմիածնի (1634—1655)
Յանդիմանագիր մը գրած է (Տաշեան, էջ 359.
Տրտրկ. «Արարատ», 1904, նաեւ առանձինն
Տրատարակուած Յուսիկ Եպիսկոպոսէ, Վաղար-
շապատ 1904): Ասոր մէջ Սիմէոն Սոյ Կա-
թողիկոսը կ'ըսէ. «. . . Յիշեմ՝ զվարդապետին
քո զբարեմտութիւն, որոյ շոռաւիղէ եւ դու ի
վեր ընծայեցար. զՄովսէս Կաթողիկոսն ասեմ¹,
որ մինչեւ ի Հռոմայ պապն զթուղթ Տնազան-
դութեան առաքեաց, եւ թաղում երանու-
թեամբ երանեալ է զնա, զոր նոցա աղօթքն
ձեզ օգնական լիցի. եւ զայն տեսեալ Յօհաննէս
Վ.ին Պատրիարգին Կ.Պոլսի ի Հռոմ զթուղթն,
եւ գրեալ զօրինակն առաքեալ էր ի յստամ-
պօլ, որ եւ ես անդ հանդիպեցայ յայնժամ եւ
առի զօրինակն զոր այժմ առ իս կայ. . . :»

Յովհ. Խուլ Կ.Պոլսի Հայերուն համար
անմոռանալի արդիւնք մ'ալ ունեցած է: Գում-
գափուի Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ
սկզբնաւորութիւնը ցայսօր անծանօթ էր: Իմ
ձեռքս հասաւ Թադէոս Միհրդատեանցի (1850
թուականներուն շատ հրատարակութիւն ունի)
մէկ յուշատետրը, որուն մէջ (էջ 17) իբր
1718ին գրուած յիշատակագրէ մ'առնելով

1 Մովսէս Գ. Սիւնեցի կամ Տաթեւացի, օծեալ
Կաթողիկոս Էջմիածնի 13 Յնր. 1629, † 14 Մայ. 1632: